«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 նոյեմբերի 2014 թվականի

2014-2015 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների մասին

Լսելով և քննարկելով **«2014-2015 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների մասին»** հարցը (զեկուցող՝ ընդունող հանձնաժողովի նախագահի տեղակալ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Պ.Ա.Քալանթարյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. ընդունող հանձնաժողովը գործել է ՀՀ ԿԳՆ-ի հաստատած կանոնակարգի պահանջներին համաձայն: Ըստ համալսարանի ընդունելության պլանի՝ առկա ուսուցման բակալավրիատին հատկացվել է 926 տեղ, որից 60-ը՝ ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ, 866-ը՝ վճարովի ուսուցման համակարգում: Ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ ընդունվել է 65 (այդ թվում 5-ը՝ ՀՀ ՊՆ պատվերով) դիմորդ, իսկ վճարովի ուսուցման համակարգում՝ 897 դիմորդ: ԼՂՀ-ին հատկացված նպատակային տեղերը համալրել է 11 դիմորդ, սփյուռքահայերի համար կազմակերպված հարցազրույցով ընդունվել է 21 դիմորդ: Այսպիսով՝ առկա ուսուցման բակալավրիատ է ընդունվել 994 դիմորդ:

Առկա ուսուցման մագիստրատուրա է ընդունվել 582 դիմորդ. 160-ը համարլ են ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ տեղերը, 422-ը՝ վճարովի ուսուցման համակարգինը: Գործատուների հետ համատեղ իրականացվող 9 մասնագիտացումներով մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելությունը կազմակերպվել է համալսարանին հատկացված տեղերի հաշվին:

Հեռակա ուսուցման բակալավրիատ դիմել է 407 դիմորդ. մրցույթով ընդունվել են 354-ը:

Հեռակա ուսուցման մագիստրատուրա է դիմել 483 դիմորդ. մրցույթով ընդունվել են 431-ը:

Ելնելով վերոգրյալից՝ համալսարանի գիտական խորհուրդը **որոշում է.**

1. 2014-2015 ուսումնական տարվա ընդունող հանձնաժողովի աշխատանքը գնահատել բավարար:
2. Հանձնարարել ֆակուլտետների խորհուրդներին՝ վերլուծել 2014 թվականի ընդունելության արդյունքները (պատասխանատուներ՝ ֆակուլտետների դեկաններ):
3. Համալսարանի կայքի միջոցով կատարելագործել ապագա դիմորդներին տրամադրվող տեղեկատվական համակարգն ու կառուցակարգերը:
4. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսում-նամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Պ.Ա.Քալանթարյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**
14.11.2014 թ.